

ՀԲԸՄԻութեան 2008-ի «Կարպիս Փափագեան» Մրցանակը Կը Յանձնուի Լեհ  
Հասարակական Գործիչ եւ Լուսանկարիչ՝ Գերապայծառ Սթանիսլաւ Փինտերային

Մարտ 31, 2009-ին, Լեհաստանի մայրաքաղաք՝ Վարշաւիա գտնուող Հայաստանի  
դեսպանատան մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը, որուն ընթացքին  
ՀԲԸՄԻութեան 2008-ի «Կարպիս Փափագեան» մրցանակը յանձնուեցաւ, Կաթողիկ  
եկեղեցոյ նուիրուած սպասաւոր, յայտնի հասարակական գործիչ եւ լուսանկարիչ,  
Գերապայծառ Սթանիսլաւ Փինտերային: Գերապայծառ Փինտերան արժանացած է  
այս մրցանակին «Հայաստան. Քարերը՝ մարդէն յաւերժ են» լուսանկարչական  
ալպոմի պատրաստման եւ հրատարակման համար, որ իրականացաւ Լեհաստանի  
մօտ Հայաստանի դեսպանի աջակցութեամբ:

Ընդունելութեանը ներկայ գտնուեցան, Լեհաստանի քաղաքական եւ հասարակական  
գործիչներ, Եւրոպական Խորհուրդէն ներս լեհական Սեյմի եւ Ծերակուտի  
պատուիրակութեան անդամները, Արտաքին Գործերու նախարարութեան  
բարձրաստիճան դիւանագետներ, Լեհաստանի Կաթողիկ եկեղեցոյ Վարշաւայի  
Արքեպիսկոպոսը, եւ Լեհաստանի մօտ հաւատարմագրուած դիւանագիտական  
ներկայացուցչութիւններու ղեկավարները: Ներկայ էր նաեւ ՀԲԸՄԻութեան-Եւրոպայի  
ներկայացուցիչ՝ Բիչըրտ Ապտալեան:

Լեհաստանի մօտ Հ. Հի դեսպան՝ Աշոտ Գալոյեան բարեգալստեան խօսք ուղղեց  
ներկաներուն, ապա՝ բացատրութիւն տուաւ թէ ինչո՞ւ Գերապայծառ Փինտերան  
արժանի նկատուած է այսպիսի պատուաբեր մրցանակի: Լուսանկարչական ալպոմի  
ստեղծման ամփոփ պատմութիւնը ներկայացնելէ ետքը, դեսպանը  
երախտագիտութիւն յայտնեց հեղինակին, շեշտելով որ իր կատարած գործի շնորհիւ,  
Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մշակութային յուշարձաններն ու տեսարժան  
վայրերը աւելի լայն շրջանակներու մօտ յայտնի պիտի դառնան՝ աւելի մեծ  
գնահատանքի արժանանալով:

Այնուհետեւ Կարպիս Փափագեանի անձնական ներկայացուցիչ եւ Աւստրոհայկական  
մշակութային ընկերակցութեան նախագահ՝ Ռազմիկ Յարութիւնեան-Թամրագեան  
Գեր. Փինտերային յանձնեց պատուոգիրն ու դրամական պարգեւը: Ընթերցուեցաւ  
նաեւ մրցանակակրին ուղղուած ՀԲԸՄԻութեան նախագահ Պերճ Սեդրակեանի  
շնորհաւորական ուղերձը:

Շնորհակալական իր խօսքին մէջ, Գեր. Փինտերան նշեց այն խոր կապը, գոր կ՝զգայ  
Հայաստանի հանդէպ.

«Առաջին տեսնելուս՝ սիրահարուեցայ այս երկրին հետ: Չայն կրնամ տեսնել աչքս  
բաց կամ գոց: Բացօդեայ թանգարանի պէս է: Վերջապէս, սիրահարուեցայ այն  
հայերուն հետ, որոնց հանդիպեցայ ուխտագնացութեանս ընթացքին... Այս ալպոմին

միջոցով կ'ուզեի ցոյց տալ Հայաստանի բնութեան իսկական գեղեցկութիւններն ու հոգեկան արժեքներու հարստութիւնը: Այս ալպոմը արտայայտութիւնն է այն հիացումին, որ ունիմ հանդէպ այս արտակարգ երկրին, ինչպէս նաեւ անոր ժողովուրդին, որ արիւն թափեց իր հայրենիքին համար: Հրաշքի համազօր երեւոյթ է Հայաստանի եւ Հայ ազգի գոյութիւնը այսօր»:

ՀԲԸՄիութեան «Կարպիս Փափագեան» մրցանակը հաստատուած է այժմ վիեննաբնակ բարերար Պր. Կարպիս Փափագեանի նախաձեռնութեամբ եւ նիւթական յատկացումներով: 1988-էն ի վեր, ամէն տարի, այս մրցանակը կը շնորհուի առ ի քաջալերանք հայութեան, հայագիտութեան եւ հայկական հարցի տարածպան ի նպաստ ներդրում կատարած երեւելի ոչ-հայ անձնատրութեանց: